ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/134

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16120-18 գրությամբ «Արտֆլոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 31.08.2018թ. թիվ 01/61-19360 գրության հիման վրա, 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16120-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Արտֆլոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արտֆլոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արտֆլոր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.09.2018թ. գրությամբ հայտնել է, որ գտնում է, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 10.08.2018թ. հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ 18/32» ծածկագրով Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Արտֆլոր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի թիվ 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ 18/32» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

1.6-րդ կետի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից,

1.7-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել 1-ին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Վերը նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 20.08.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Արտֆլոր» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում:

Հանձնաժողովի 27.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.4-րդ համաձայն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, Հանձնաժողովն, հիմք ընդունելով հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետը, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Վերոնշյալի կապակցությամբ Ընկերությունը հայտնել է, որ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով 20.08.2018թ. ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել «Արտֆլոր» ՍՊԸ-ին, որի համաձայն Ընկերությունը պարտավոր է վերը նշված փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «gor.muradyan@yerevan.am» էլ. փոստի հասցեին:

«Արտֆլոր» ՍՊԸ-ն հրավերի և ծանուցման համաձայն՝ սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է բոլոր պահանջվող փաստաթղթերը: Սակայն մարդկային գործոնի պատճառով, «gor.muradyan@yerevan.am» էլ. փոստի հասցեի փոխարեն, փաստաթղթերը սխալմամբ 23.08.2018թ. ժամը 14:59-ին ուղարկվել են gagik.huroyan@yerevan.am էլ. փոստի հասցեին, որը նույնպես հանդիսանում է Պատվիրատուի գնումների վարչության պաշտոնական էլ. փոստի հասցե: Այս մասով Ընկերությունը նշել է նաև, որ սովորաբար շինարարական աշխատանքների հետ կապված ծանուցումները ստացվում և ուղարկվում են «gagik.huroyan@yerevan.am» էլ. փոստի հասցեով, և այդ իսկ պատճառով Ընկերության աշխատակցի կողմից, ոչ միտումնավոր, սխալմամբ ուղարկվել է հենց այդ էլ. փոստի հասցեին:

Ընկերությունը որպես վորոնշյալի ապացույց կցել է «gagik.huroyan@yerevan.am» էլ. փոստի հասցեին ուղարկված նամակի կարճապատկերումը (screenshot): Ընկերությունը կարող է նաև անհրաժեշտության դեպքում ՍՑ-ԱՄ-2018/134 ծածկագրով պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության նիստի ժամանակ համակարգչի միջոցով ցույց տալ համապատասխան նամակը, և համոզվել նրանում, որ «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից ուղարկված նամակը վերաբերում է Պատվիրատուի կողմից

հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ 18/32» ծածկագրով գնման ընթացակարգին և կցված են այդ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, այլ ոչ այլ գնման ընթացակարգերի:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)2-րդ հոդվածի 23-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 34-րդ հոդվածի 6-րդ մասը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու

դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում, Ընկերությունը գտնում է, որ «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից Հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ուղարկվել են Պատվիրատուին: «Արտֆլոր» ՍՊԸ-ի վարքագիծը և կատարած գործողությունները վկայում են այն մասին, որ Ընկերությունը չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից և նպատակ չի հետապնդել խուսափելու գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումից, որպիսի պայմաններում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ընկերությունը նշել է, որ նմանատիպ փաստական հանգամանքների վերաբերյալ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացվել է ՍՑ-ԷՍ-2018/51 ծածկագրով որոշումը, որը կարող է հիմք հանդիսանալ սույն ընթացակարգի շրջանակներում կայացվելիք որոշման համար:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16120-18 գրությամբ ներկայացված «Արտֆլոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել և Ընկերությանը չներառել նշված ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/134 ընթացակարգի շրջանակներում 10.09.2018թ. ժամը 10:30-ին և 14.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 14.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.08.2018թ. թիվ 01/61-19360 գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի շրջանակներում «Արտֆլոր» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ մասի դրույթի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում փաստաթղթերը չեն ներկայացվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է մերժել Ընկերության հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/134 ընթացակարգի շրջանակներում 10.09.2018թ. ժամը 10:30-ին և 14.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/134 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/134 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արտֆլոր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.6 կետի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 20.08.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. «Արտֆլոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «artflor@inbox.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլ. փոստի հասցեից 23.08.2018թ. ժամը 14:59-ին Ընթացակարգի հրավերում նշված «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեի փոխարեն հրավերով նախատեսված փաստաթղթերը ուղարկվել են «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16120-18 գրությունը,

Երևանի քաղաքապետարանի 31.08.2018թ. թիվ 01/61-19360 գրությունը և կից փաստաթղթերը, «Արտֆլոր» ՍՊԸ-ի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր

հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արտֆլոր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.6 կետի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 20.08.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային հասցեին ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Արտֆլոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ՍՑ-ԱՄ-2018/134 ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «artflor@inbox.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլ. հասցեից 23.08.2018թ. ժամը 14:59-ին Ընթացակարգի հրավերում նշված «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեի փոխարեն հրավերով նախատեսված փաստաթղթերը ուղարկվել են «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեին:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված «artflor@inbox.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև նշված էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» բաժնի համապատասխան էլեկտրոնային նամակն, արձանագրում եմ,

որ Ընկերությունը «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան ծանուցումը ստանալուց հետո (20.08.2018թ.) սահմանված ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, 23.08.2018թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարի «gor.muradyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեի փոխարեն հրավերով նախատեսված փաստաթղթերն ուղարկել է Պատվիրատուի մեկ այլ աշխատակցի «gagik.huroyan@yerevan.am» էլեկտրոնային փոստի հասցեին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը մասնակցի կողմից գնահատող հանձնաժողովին ուղարկվում են գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ուսումնասիրելով «Արտֆլոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընկերության էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքն, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերն ուղարկվել են ոչ թե հրավերով սահմանված և ծանուցման մեջ նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին, այլ սխալմամբ՝ Երևանի քաղաքապետարանի մեկ այլ աշխատակցի էլեկտրոնային փոստին, այնուամենայնիվ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը, քանի որ Ընկերությունը համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված եռօրյա ժամկետում փաստացի կատարել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն

ուղարկելու պարտականությունը, միևնույն ժամանակ թյուրիմացաբար ուղարկելով Պատվիրատուի մեկ այլ աշխատակցի էլեկտրոնային փոստին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Արտֆլոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16120-18 գրությամբ «Արտֆլոր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04415406) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ